ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՄԱՐՏԻ 11-ԻՆ, ՇԱԲԱԹ, Հոգևոր Ճեմարանի ընթերցասրահում տեղի ունեցավ ուսանողության ուժերով կազմակերպված գրական-գեղարվեստական երեկո։

Գրական-գեղարվեստական երեկոյին բարեշնորհ Արշավիր սարկավագ Շաքարյանը կարդաց «Անառակ որդին» խորագրով իր գրած քարոզը։ Ուսանողները կատարեցին արտասանություններ, երգեր ու խմբերգեր։

Գրական-գեղարվեստական երեկոյին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՄԱՐՏԻ 12-ԻՆ, ԴԱՏԱՎՈՐԻ ԿԻՐԱԿԻՆ, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը։ Քարոզեց արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը՝ «Պարտ է յամենայն ժամ կալ յաղօթս և մի՛ ձանձրանալ» բնաբանով (Ղուկ. ԺԸ 1)։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՄԱՐՏԻ 16-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, երեկոյան ժամը 4-ին, Հոգևոր Ճեմարանի ուսանողությանը «Մարդու նկարագրի ճարտարապետությունը» թեմայի շուրջ շահեկան դասախոսություն կարդաց Ճեմարանի դասախոս Սարգիս Կոնսուլյանը։

Դասախոսությունը լսվեց խորին հետաքրքրությամբ։

***

ՄԱՐՏԻ 18-ԻՆ, ՇԱԲԱԹ, «Տօն է Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ սոսկալի շարշարանացն և մտին ի վիրապն»։

Մայր Տաճարում պատարագեց և օրվա ազգային-եկեղեցական տոնի հոգևոր նշանակության մասին քարոզեց գերաշնորհ Տ. Վարդան եպիսկոպոս Տեր-Սահակյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Նույն օրը, Երևանի եկեղեցիներում, օրվա տոնի և Մեծ Սրբի կյանքի ու գործի մասին քարոզեցին Մայր Աթոռի միաբան սարկավագները։

Օրվա տոնի առթիվ, նույն օրը, փակ էր Հոգևոր Ճեմարանը։

***

ՄԱՐՏԻ 19-ԻՆ, ԳԱԼՍՏՅԱՆ ԿԻՐԱԿԻՆ, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Հուսիկ վարդապետ Սանթուրյանը և հավուր պատշաճի քարոզեց Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Տերյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՄԱՐՏԻ 20-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Հոգևոր Ճեմարանի ուսանողությունը, դասախոսական կազմի գլխավորությամբ, ուխտի գնաց Խոր Վիրապի վանքը։

Սրբավայրում ուսանողությունը կատարեց իր ուխտը և ապա հանգամանորեն ծանոթացավ Խոր Վիրապի վանքի պատմությանը։

Այնուհետև ուսանողությունը այցելեց Դվինի ավերակները, ուր նույնպես ծանոթացավ Հայաստանի երբեմնի մայրաքաղաքի պատմության, քաղաքի Մայր Եկեղեցու և Կաթողիկոսարանի շինությանը։

Ուսանողությունը երեկոյան ուրախ և բարձր տրամադրությամբ վերադարձավ Մայր Աթոռ։

***

ՄԱՐՏԻ 22-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, Մայր Տաճարում կատարվեց Մեծ պահոց Արևագալի վերջին հանդիսավոր ժամերգությունը, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ։

Արևագալի ժամերգությանը ներկա էին Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը և Մայր Աթոռի պաշտոնեությունը։

***

ՄԱՐՏԻ 23-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ առավոտյան, Հոգևոր Ճեմարանում սկսվեցին կիսամյա քննությունները, որոնք տևեցին մինչև մարտի 28-ը, երեքշաբթի օր։ Ուսանողությունը հաջող քննություններ հանձնեց ընդհանրապես «լավ» և «գերազանց» գնահատականներով։

***

ՄԱՐՏԻ 24-ԻՆ, ՈՒՐԲԱԹ երեկոյան, Մայր Տաճարում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվեց Մեծ պահոց վերջին հանդիսավոր հսկումը։

***

ՄԱՐՏԻ 26-ԻՆ, ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ԿԻՐԱԿԻՆ, Մայր Տաճարում եպիսկոպոսական հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց Վրաստանի հայոց թեմի առաջնորդ գերապատիվ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը և քարոզեց՝ նկարագրելով Քրիստոսի հաղթական մուտքը Երուսաղեմ, վեր հանելով օրվա մեծ տոնի բարոյական նշանակությունը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Երեկոյան ժամը 5-ին Մայր Տաճարում տեղի ունեցավ «Դռնբացէք»-ի հանդիսավոր արարողությունը։

Ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՄԱՐՏԻ 29-ԻՆ, ԱՎԱԳ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, զատկական տոների առթիվ, Հոգևոր Ճեմարանի ուսանողությանը տրվեց արձակուրդ։

Երեկոյան ժամերգությունից հետո ուսանողությունը խոստովանվեց Մայր Տաճարում։

***

ՄԱՐՏԻ 30-ԻՆ, ԱՎԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ, «Ցիշատակ ընթրեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։

Առավոտյան ժամերգությունից հետո Մայր Տաճարում պաշտվեց սուրբ պատարագ։ Պատարագեց հոգեշնորհ Տ. Գարեգին ծայրագույն վարդապետ Տեր-Հակոբյանը։

Սուրբ պատարագի ավարտին, Հոգևոր Ճեմարանի ուսանողությունը ստացավ սուրբ հաղորդություն։

Երեկոյան ժամը 5-ին, Մայր Աթոռի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսի հանդիսադրությամբ, կատարվեց «Ոտնալվա»-յի կարգը։

Հանդիսության ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Երեկոյան ժամը 7-ին Մայր Տաճարում պաշտվեց հսկում և գիշերային ժամերգություն։ Վեհափառ Հայրապետը կարդաց հսկումի առաջին մեծ Ավետարանը։

***

ՄԱՐՏԻ 31-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, «Ցիշատակ շարշարանաց և խաչելության Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։

Առավոտյան ժամը 9-ին Մայր Տաճարում կատարվեց Խաչելության կարգը։

Երեկոյան ժամը 5-ին Վեհափառ Հայրապետը Մայր Տաճարում նախագահեց թաղման արարողությանը։

***

ԱՊՐԻԼԻ 1-ԻՆ, ՇԱԲԱԹ, «Ճրագալոյց Զատկի»։

Մայր Տաճարում ավանդական հանդիսավորությամբ կատարվեցին առավոտյան և երեկոյան ժամերգությունները։

Հոգևոր Ճեմարանի ուսանողները հաջողությամբ ընթերցեցին Դանիելի գիրքը։ Ճրագալույցի սուրբ պատարագը մատուցեց գերապատիվ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը։

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետը, եկեղեցական թափորով և «Այսօր յարեաւ ի մեռելոց» շարականի երգակցությամբ, առաջնորդվեց Վեհարան, ուր օրհնեց միաբանությանը։

***

ԱՊՐԻԼԻ 2-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, ԶԱՏԻԿ, «Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։

Առավոտյան ժամը 11.30-ին Վեհափառ Հայրապետը, ամպհովանու տակ, հանդիսավորությամբ առաջնորդվում է Մայր Տաճար, մատուցելու Զատկվա տոնի առթիվ հայրապետական սուրբ պատարագ։

Ս. Սեղանին սպասարկում են գերաշնորհ Տ. Սահակ և Տ. Վարդան սրբազանները, վարդապետներ, քահանաներ և սարկավագներ։

«Հայր մեր»-ի ժամանակ քարոզում է Վեհափառ Հայրապետը։

Նույն օրը, երեկոյան ժամը 11.30-ին, Երևանի ռադիոկայանից ձայնասփռվում է Վեհափառ Հայրապետի զատկական քարոզը։

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետը Վեհարանում ընդունում է զատկական շնորհավորություններ միաբանության և պաշտոնական անձանց կողմից, ապա օրհնում է և բարեմաղթություններ անում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անսասանության և Հայ Եկեղեցու պայծառության, Հայրենի երկրի և համայն հայ ժողովրդի բարգավաճման և աշխարհի խաղաղության համար։

Ժամը 4-ին, Վեհափառ Հայրապետը բարեհաճում է զատկական իր սեղանին մասնակից դարձնել Մայր Աթոռի միաբանությանը, պաշտոնական անձանց և հյուրերին։

***

ԱՊՐԻԼԻ 3-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, «Ցիշատակ մեռելոց»։ Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Հարություն վարդապետ Մատենյանը։

Հավարտ սուրբ պատարագի, կատարվեց հոգեհանգիստ «վասն համօրէն ննջեցելոց»։

***

ԱՊՐԻԼԻ 4-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, Վեհափառ Հայրապետի բարձր հրամանով, Հնդկաստան, Իրաք և Լիբանան գործուղվեց մի պատվիրակություն, բաղկացած գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսից և դիվանապետ Հայկ Առաքելյանից։

Մայր Աթոռի պատվիրակությունը մեր եկեղեցիներին և հայ հավատացյալ ժողովրդին կտանի Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունները և հայրական խորհուրդները՝ ի շինություն և համրապնդումն մեր ժողովրդի հոգևոր միասնության։

***

ԱՊՐԻԼԻ 4-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, Հոգևոր Ճեմարանի ուսանողությունը զբոսապտույտ կատարեց դեպի Արզնի առողջարանը։

Արզնիում ուսանողները, հաստատության գլխավոր բժշկուհու առաջնորդությամբ, այցելեցին առողջարանի կաբինետները, լողարանները, եղան Արզնի կուրորդի առաջին և երկրորդ բաժանմունքներում, և հրաժեշտ առին լավագույն տպավորություններով։

Ուսանողները նախաճաշեցին Արզնի առողջարանին կից, Հրազդանի ափին։

Ապա ուսանողները իրենց ճանապարհի վրա այցելեցին Եղիվարդի պատմական եկեղեցին, դիտեցին նաև Աշտարակի գմբեթավոր բազիլիկան։

Երեկոյան ժամը 4-ին ուսանողները վերադարձան Մայր Աթոռ քաղցր հուշերով։

***

ԱՊՐԻԼԻ 5-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, Հոգևոր Ճեմարանի ուսանողները զբոսապտույտ կատարեցին դեպի Երևան։ Ուսանողները եղան Պետական պատկերասրահում, Թումանյանի տուն-թանգարանում, այցելեցին Պանթեոնը, ուր կանգ առին Կոմիտաս վարդապետի շիրմի առաջ։

Ուսանողները ապա այցելեցին Հրազդանի ձորը, եղան մանկական երկաթուղում ու վերադարձան Մայր Աթոռ։

***

ԱՊՐԻԼԻ 6-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, զատկական արձակուրդներից հետո, վերսկսվեցին Հոգևոր Ճեմարանի դասերը։